*Պարոն/* ______________

*Խնդրում եմ նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար*

*ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Մ.Մեսրոպյանին*

*Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն*

*Մ.Մեսրոպյան*______________

« 20 » ____07____ 2026թ.

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2025 թվականի հուլիսի 14-15-ին Աթենք քաղաքում (Հունաստան) կայացած՝ «Փոխկապակցելով էներգետիկ ապագան. փոխկապակցողներ և վերականգնվող էներգիայի ինտեգրում» թեմայով բարձր մակարդակի համաժողովին մասնակցության**

1. **Մասնակիցների անուն, ազգանուն՝**
   - Սերգեյ Աղինյան,
   - Սևակ Բաբայան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի պետ:
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** քաղաք Աթենք (Հունաստան), 2026 թվականի հուլիսի 14-15-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը՝**

Եվրոպական Միության հանուն էներգետիկայի (EU4Energy) նախաձեռնության տարածաշրջանային գրասենյակ և Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցել 2026 թվականի հուլիսի 14-15-ին Աթենք քաղաքում (Հունաստան) կայացած՝ «Փոխկապակցելով էներգետիկ ապագան.

փոխկապակցողներ և վերականգնվող էներգիայի ինտեգրում» թեմայով բարձր մակարդակի համաժողովին:

**6. Քննարկված թեմաները՝**

**Օր 1-ին**

- սահմանային միջկապակցված գծերի ռազմավարական կարևորությունը Արևելյան գործընկերության տարածաշրջանում էներգետիկ անվտանգության, շուկայի ինտեգրման և վերականգնվող էներգիայի տեղակայման համար.
- Արևելյան գործընկերության երկրների նախարարությունների և կարգավորող մարմինների, ինչպես նաև ԵՄ ինստիտուտների միջև քաղաքականության շուրջ երկխոսության ամրապնդում.
- Արևելյան գործընկերության երկրների եվրոպական էներգետիկ շուկային ինտեգրմանը աջակցություն, տարածաշրջանային համագործակցությունը խթանելու և ԵՄ էներգետիկ քաղաքականությանը համապատասխանեցնելու երկարաժամկետ նպատակի ամրագրում.
- Էլեկտրաէներգետիկական շուկան և վերականգնվող էներգիայի զարգացումը էներգետիկ համայնքում.
- Եվրոպական փոխկապակցվածությունը որպես էներգետիկ ցնցումների դեմ երկարաժամկետ ռազմավարություն.
- ***ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Սերգեյ Աղինյանը հանդես է եկել ելույթով՝ «Արևելյան գործընկերության հեռանկարներն ու ապագա ուղիները» թեմայով պանելային քննարկման ընթացքում.***
- ***Պանելային քննարկման ընթացքում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Սերգեյ Աղինյանն անդրադարձել է Հայաստանի ռազմավարական նշանակություն ունեցող ենթակառուցվածքային ծրագրերին, որոնք էական նշանակություն ունեն տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացման, էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնման և վերականգնվող էներգիայի ավելի մեծ ծավալների ինտեգրման համար:***

**Օր 2-րդ**

- Համաժողովի շրջանակում կազմակերպվել է շրջայց և լսումներ Հունաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի (IPTO) տարածքում, որտեղ

նշված օպերատորի աշխատակիցների կողմից համաժողովի մասնակիցներին ներկայացվել է Հունաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից համակարգի ռեժիմների կարգավորման և էլեկտրական էներգիայի փոխադրման համակարգում իրականացվող գործառույթների առանձնահատկությունները:

- *ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ներկայացուցիչները Հունաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի աշխատակիցներից մանրամասն տեղեկատվություն են ստացել Հունաստանի էներգետիկ համակարգի կառուցվածքի, տարբեր էներգառեսուրսներով գործող էլեկտրակայանների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության տեսակարար կշիռների և էլեկտրաէներգետիկական համակարգում ռեժիմների կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ:*

**7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ մասնակից երկրների աշխատակիցների կողմից պարբերաբար փորձի և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման ուղղությամբ:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝** Միջոցառման արդյունքներով պայմանավորված՝ առաջարկում ենք շարունակել համագործակցությունը

Գործուղվող ---------------------------------------- 20.07.2026թ. ---------------- *Ս. Աղինյան*

*(ստորագրությունը, ամսաթիվը)*

Գործուղվող ---------------------------------------- 20.07.2026թ. ---------------- *Ս. Բաբայան*

*(ստորագրությունը, ամսաթիվը)*

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-
Ն որոշման

Օրինակելի ձև

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը __Հրաման 470-ԳՔ, Հրաման 473-ՀՆ 15.06.2026թ.__

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սերգեյ Աղինյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի պետ՝ **Սևակ Բաբայան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **__ք.Աթենք__** **__/Հունաստան /__**

5. Գործուղման ժամկետները **13.07.2026-16.07.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **__ճանապարհածախս, գիշերավարձ__**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **__օրապահիկ__** և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Սերգեյ Աղինյան | Սևակ Բաբայան | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|
| Ճանապար- հածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս) | | | - |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | | | - |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո) | | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | | |
| | Օրերի քանակը | | | |
| | Ընդամենը (դրամ) | | | |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո) | 61 | 61 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 26,077 | 26,077 | |
| | Օրերի քանակը | 4 | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | 104,308 | 104,308 | 208.616 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | - |
| | Այլ ծախսեր (ճանապարհածախս) | | | - |
| **Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)** | | 104.308 | 104.308 | 208.616 |

**Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,**

*(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)*

Ամսաթիվ 17.07.2026թ.